ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 400 - Ա

„09" դեկտեմբերի 2024թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2530-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրը՝

Որոշում եմ՝

1. 2024 թվականի 4-րդ եռամսյակում մարզի Վեդի համայնքում իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն:

2. Հաստատել իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2530-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) ապահովել համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրությամբ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) տեղեկացումը, որը պարունակում է տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին.

2) համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.

3) իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում կազմված արձանագրությունը, խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև հսկողության վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած առարկությունները սահմանված ժամկետում հրապարակել մարզպետի աշխատակազմի ինտերնետային պաշտոնական կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ստորագրող
ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
2409881092

2024-12-09 16:12:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի 2024թ.

դեկտեմբերի 09-ի

400-Ա որոշման

2024 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանումը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը*	*Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1	Վեդի	դեկտեմբերի 12–20	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ *(աշխատանքային խմբի ղեկավար)*	Հովհաննես Ուրֆալյան
			ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	Իրավաբանական բաժնի պետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Հրաչ Դավթյան
			ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Արարատ Գոլեցյան
			Հողօգտագործման բնագավառ	Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Ոսկան Միսակյան
			Քաղաքաշինության բնագավառ	Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Վահե Բաղդասարյան
			Ֆինանսական բնագավառ	Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Ռաֆիկ Թարվերդյան

			Առևտրի և ծառայությունների բնագավառ	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ*(աշխատանքային խմբի անդամ)*	Վարդան Սաֆարյան
			Առևտրի և ծառայությունների բնագավառ	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Սոնա Արամյան
			Պաշտպանության բնագավառ	Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (*աշխատանքային խմբի անդամ)*	Մուրադ Միքայելյան
			Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)	Ալբերտ Մկրտչյան
			Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)	Անահիտ Խուդավերդյան
			Գյուղատնտեսության բնագավառ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Աշոտ Սարգսյան
			Առողջապահության և սոցիալական բնագավառներ	*Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)*	Հայկ Բաղալայն
			Առողջապահության և սոցիալական բնագավառներ	*Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)*	Աստղիկ Ղազարյան

Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ
3414870525

2024-12-09 16:08:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ